ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 3.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

«13» Նոյեմբերի 2017թ. № 134-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի № 1162-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ և 5-րդ կետերին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի № 224-Ն որոշմամբ հաստատված № 1 հավելվածի 18-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմից (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացուցիչ նշանակել Նախարարության աշխատակազմի զորահավաքային բաժնի պետ Արմեն Պետրոսյանին, իսկ նրան փոխարինող նշանակել նույն բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Նազարյանին:
2. Նախարարության աշխատակազմի զորահավաքային բաժնի պետ Արմեն Պետրոսյանին՝ նախապատրաստել սույն հրամանի 1-ին կետով նշանակված անձանց տվյալների վերաբերյալ տեղեկատվության կազմումը՝ սահմանված ժամկետներում և կարգով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնելու համար:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ